որ է մօտ ի բերդն, իշխանեցաւ և զօրքն ըստ մեծի մասին ցրուեցան և ինքն հրաման հանեալ զամենայն երկիրն ժողովել ետ ի բերդն, և ի պարիսպ սրբոյ Աթոռոյս և յայլ ամրոցս։ Իսկ նոքա մտեալ յերկիրս և զՇարուր հնազանդեցուցեալ ինքեանց՝ զառաջիկայ գիշերայսն հրակիզելով յետ երից աւուրց հասին առ սա. և սա սակաւ զօրօքն անխոհեմաբար մարտուցեալ, պարտեցան և մտին ի բերդն, իսկ հետամուտ եղեալ զօրաց նոցա հասեալ էին մինչ ի դուռն բերդին և ի մէյտանն և յայնմ տեղւոջ դարձեալ սոցա զրաղումս ի նոցանէ կոտորեալ էին. և միւսքն զաւարս ինչ արարեալ ի մօտոյ բերդին դարձան անտի և ի Նորագաւիթ գիւղն բանակեցան։ Յետ Բ (2) աւուրց պատերազմին՝ Ջաֆարղուլի բէկն թուղթ էր գրեալ մեզ և քանի մարդկամբ իւրով յղեալ առ մեզ, միտքն այս թէ՝ Երևանու խանն տղայութիւն առնելով զբարեկամութիւն մեր քակեաց և յանկարծ եկն ի վերայ մեր և վնաս հասոյց և զիս առեալ երեր. և զկնի դարձման մերոյ վերստին ևս զօր ժողովեալ գայր ի վերայ մեր, ուստի և մեզ հարկ եղև գալ և ի գալս մեր ևս՝ ոչ մարդ յղեաց ընդ առաջ և ոչ շնորհ ինչ եցոյց. այլ պատերազմեցաւ ընդ մեզ, և այսպէս եղև։

Բայց դու միամիտ լեր, որ մեք առ ձեզ բարեկամութիւն ունիմք, և զօրաց մերոց պատուիրեալ եմք ոչ ինչ վնաս առնել ձեզ։ Ձեր մարդն գայ և գնայ. և խանին խրատ գրեա, մի առնել այսպէս, և այլն։ Իսկ մինչ թուղթն և մարդիկն եկին, ի նոյն գիշերին մեր խելացի խանն ևս թուղթ էր գրեալ, թէ մեք կռուեցաք և մտաք ի բերդն, և պատրաստութիւն տեսանեմք զօրք բերելոյ. մի գուցէ հաղորդութիւն ինչ առնիցէք ընդ նոսա և կերլի ինչ տայցէք, զի ի խոր խոցելոց եմք ի ձէնջ. այլ թէ գայցեն, հարէք և ի բաց վարեցէք և այլն։ Ուստի և մեք ոչ կարացաք ի մէնջ մարդ յղել և կամ զրնծայ առ Ջաֆարղուլին. այլ զեկեալսն ի նմանէ շահեալ և շնորհակալութեան թուղթ գրեալ վերադարձուցաք։ Յետ քանեաց աւուրց մեծ եղբայրն նորա՝ Հիւսէին խանն Խօյայ, ևս եկն ի բանակն։ Եւ սոքա քանիցս մարդ յղեալ առ Վիրսն, ասա ևս ձայն հռչակեցին, թէ զօրք գան ի վրաց. և նոքա իբրու է (7) օր կացեալ անդ առ բերդին, ապա՝ թէ յերկիւղէ վրացն և թէ ի սովուն զոր կրէին, ի յօգոստոսի ԻԹ (29) ելին անտի, և զԹարաքար գիւղն և զայլս ևս հրակիզեալ, յանկարծ յայս կողմն դիմեցին, զոր ոչ կարծէաք, թէ ընդ այսր անցանեն. և տաճիկ զէտքն մեր ևս յայդիսն մտեալ գոլով՝ անագան հասին ասա զդաղցուցանել մինչ զի ի հասանիլ նոցա ասա, զօրաց գունդքն ևս երևեցան։ Յայնժամ իւրաքանչիւրքն ջանացին զնախիրս իւրեանց ժողովել. մերայինքն ևս զոմանս ածին ի պարիսպս, բայց գութանի տաւարն՝ եղն և գոմէշ և մոզոց նախիրն և գիւղիս մերոյ նախիրն մնացին արտաքոյ՝ զորս ոչ ժամանեցին ածել ի ներս, և յառաջոյ եկեալ ալամանչիքն յարձակեալ ասպատակեցին զայնս և մտեալ ի յերիս վանորայսն զնոցա տաւարն ևս, նաև զամենայն ինչ զորս տեսին՝ յափշտակեցին։ Եւ ի յանդաստանսն զերեք անձինս գտեալ ի գեղջէս մերմէ, կալան զնոսա ևս։

Ձետ որոց՝ խաներն բազմութեամբ զօրացն եկին հանդարտութեամբ, և անցեալ ընդ հարաւային կողմամբն սրբոյ Գայիանեայ վանիցն և հասեալ յեզր գետոյն մերձ ի ջրաղացն մեր՝ իջին անդ և վրանս հարին. և ի ճանապարհին տեսեալ, թէ ոչ գոյ ընդ առաջ գնացող, մարդիկ յղեցին առ մեզ յորդորել զմեզ գնալ ի տես ինքեանց։ Իսկ մեք պատասխանեցաք, թէ ասա պահապանք կան յիշխողէն մերմէ և պարսպի իշխանութիւնն այսօր առ նոսա է. մեք ոչ կարեմք գնալ և այլն։ Իսկ զերիս թուղթս գրեցաք առ Հիւսէին խանն և առ եղբայրն Ջաֆարղուլին և առ Քեալպալի խանն և ի ձեռն Խաչատուր և Ներսէս վարդա-